ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

16.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/05

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Այթիոեսուրսիս» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝

Դ.Շահբազյանի (իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից քաղվածք, գրանցման համար՝ 286.110.1020862)

Հ. Ենգոյանի (լիազորագիր, տրված՝ 19.04.2019թ.)

Սոցիալական ապահովության ծառայության ներկայացուցիչ՝

Գ. Ջանջուղազյանի (լիազորագիր, տրված՝ 11.04.2019թ.)

քննելով Սոցիալական ապահովության ծառայության կարիքների համար ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Այթիոեսուրսիս» ՍՊԸ-ի կողմից 17.04.2019թ. ներկայացված (18.04.2019թ. վարույթ ընդունված) բողոքը և նույն ծածկագրով ընթացակարգի, ինչպես նաև «ՍԱԾ ԷԱՃԾՁԲ-19/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ի կողմից 16.04.2019թ. և 17.04.2019թ. ներկայացված (18.04.2019թ. վարույթ ընդունված) համանման բողոքները (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/05 բողոք), պարզեցի հետևյալը.

1. **«Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին երկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 17.04.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

Սոցիալական ապահովության ծառայության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպվել է «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

Վերոհիշյալ ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ն (կոնսորցիում՝ «ԷՄ ԸՆԴ ԴԸ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ) և ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.03.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 5.բ կետի համաձայն հանձնաժողովը որոշեց առաջարկել «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

«Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման փաստաթղթերը, որոնցում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

«Տեղեկացնում ենք, որ Սոցիալական ապահովության ծառայության կարիքների համար ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5 ծածկագրով գնանշման հարցման ձևով ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների գնման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակներում «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ և «ԷՄ ԸՆԴ ԴԸ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից հանձնաժողովին ներկայացրած փաստաթղթերում առկա են հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, մասնավորապես. նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը չի համապատասխանում ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5 ծածկագրով հրավերի 2-րդ մասի 1.3 կետով

սահմանված պայմաններին: Հետևապես պայմանագրի (պայմանագրերի) և այդ պայմանագրերի պատշաճ կատարումը գնահատելու համար (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հայերեն լեզվով տարբերակները:

Այդ կապակցությամբ գնահատող հանձնաժողովի որոշմամբ նիստը կասեցվել է և հրավերով սահմանված պահանջների համաձայն առաջարկում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը՝ շտկված փաստաթղթի տարբերակը մինչև կասեցման ժամկետի ավարտը էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել Սոցիալական ապահովության պետական ծառայություն:

Տեղեկացնում ենք նաև, որ եթե սահմանված ժամկետում Մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում»:

Ի պատասխան գնահատող հանձնաժողովի կողմից անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ 22.03.2019թ. ուղարկված ծանուցման՝ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ն ներկայացրել է շտկված փաստաթղթերը:

Իսկ այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.03.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.ա կետի համաձայն գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ նախկինում կատարված պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար մասնակցի կողմից ներկայացրած պայմանագրով հաստատված՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերի՝ պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածների պատճեներն առկա չեն, ինչը հնարավորություն չի տալիս գնահատելու պայմանագրով նախատեսված համակարգի ստեղծման աշխատանքների հանձնումը պայմանագրի 9.3 և 9.4 կետերով սահմանված հավելվածներին համապատասխան:

Եվ նույն արձանագրության 2.ա կետի համաձայն՝ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի /կոնսորցիում՝ «ԷՄ ԸՆԴ ԴԸ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ/ կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար:

Ընկերությունը վկայակոչել է հետևյալ իրավական ակտերը.

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.03.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 5.բ կետի համաձայն հանձնաժողովը որոշեց՝ առաջարկել «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, որը Ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացրել է, սակայն՝ գնահատող

հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

«Սոցիալական ապահովության ծառայության կարիքների համար «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ձևով ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների գնման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակներում «Այթիռեսուրսիս» ՍՊԸ և «ԷՄ ԸՆԴ ԴԸ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից հանձնաժողովին ներկայացրած փաստաթղթերում առկա են հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, մասնավորապես. նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը չի համապատասխանում «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով հրավերի 2-րդ մասի 1.3 կետով սահմանված պայմաններին: Հետևապես պայմանագրի (պայմանագրերի) և այդ պայմանագրերի պատշաճ կատարումը գնահատելու համար (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հայերեն լեզվով տարբերակները:

Այդ կապակցությամբ գնահատող հանձնաժողովի որոշմամբ նիստը կասեցվել է և հրավերով սահմանված պահանջների համաձայն առաջարկում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը՝ շտկված փաստաթղթի տարբերակը մինչև կասեցման ժամկետի ավարտը էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել Սոցիալական ապահովության պետական ծառայություն:

Ընկերությունը հայտնել է նաև, որ եթե սահմանված ժամկետում Մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում:

Ի պատասխան գնահատող հանձնաժողովի կողմից 22.03.2019թ. ուղարկված ծանուցման՝ անհամապատասխանությունը շտկելու, «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ն ներկայացրել է ծանուցմամբ և 22.03.2019թ. արձանագրությամբ արձանագրված շտկված փաստաթղթերը, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.03.2019թ. տեղի

ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.ա կետի համաձայն արձանագրվել է, որ նախկինում կատարված պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար մասնակցի կողմից ներկայացրած պայմանագրով հաստատված՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերի՝ պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածների պատճենները առկա չեն, ինչը հնարավորություն չի տալիս գնահատելու պայմանագրով նախատեսված համակարգի ստեղծման աշխատանքների հանձնումը պայմանագրի 9.3 և 9.4 կետերով սահմանված հավելվածներին համապատասխան: Եվ նույն արձանագրության 2.ա կետի համաձայն՝ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ն /կոնսորցիում՝ «ԷՄ ԸՆԴ ԴԸ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ/ կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար:

Ընկերությունը հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում Ընկերության կողմից շտկվել են, սակայն անհասկանալի և կասկածելի պայմաններում ներկայացված հայտը մերժվել է մեկ այլ հիմքով, այն է՝ ներկայացրած պայմանագրով հաստատված՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերի՝ պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածների պատճեներն առկա չեն, ինչը հնարավորություն չի տալիս գնահատելու պայմանագրով նախատեսված համակարգի ստեղծման աշխատանքների հանձնումը պայմանագրի 9.3 և 9.4 կետերով սահմանված հավելվածներին համապատասխան:

Միևնույն ժամանակ Ընկերությունը խնդրել է հաշվի առնել այն հանգամանքը, որ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը վերաբերվում էին ներկայացված պայմանագրի (պայմանագրերի) և այդ պայմանագրերի պատշաճ կատարումը գնահատելու համար (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հայերեն լեզվով տարբերակները ներկայացնելու մասին է, որը Ընկերության կողմից կատարվել է, բայց միևնույն ժամանակ գնահատող հանձնաժողովի կողմից մատնանշվել Հրավերի ՄԱՍ 2-ի 1.3 կետը:

Հրավերի ՄԱՍ 2-ի 1.3 կետի համաձայն՝ հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն, ինչը նշանակում է, որ նույնիսկ այս

պարագայում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն իրավունք չուներ Ընկերությանը տալ շտկել ներկայացված փաստաթղթերը՝ անգլերենից-հայերեն թարգմանելու հիմքով, այն էլ հիմք ընդունելով Հրավերի ՄԱՍ 2-ի 1.3 կետը:

Ավելին, Ընկերության հայտը հանձնաժողովի կողմից մերժելու դեպքում Պատվիրատուն ստիպված կլինի կնքել պայմանագիր հաջորդաբար տեղ զբաղեցրած ավելի բարձր գին առաջարկած մասնակցի հետ, ինչն էական վնաս կպատճառի բյուջեին և կհանդիսանա բյուջեի միջոցների անհիմն վատնում:

Ընկերությունը բողոքով խնդրել է՝

1. Դադարեցնել «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.03.2019թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը.

2. Դադարեցնել «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.03.2019թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումից հետո գնահատող հանձնաժողովի կողմից կայացված բոլոր մյուս որոշումները.

3. Պարտավորեցնել «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել համապատասխան որոշում «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը գնահատելու վերաբերյալ:

«Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 22.04.2019թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. «Գլոբալ Սոլուշն»» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ն 16.04.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

Սոցիալական ապահովության ծառայության կարիքների համար համար կազմակերպվել է «ՍԱԾ ԷԱՃԾՁԲ-19/3» ծածկագրով գնման ընթացակարգ (հետայսու նաև՝ Աճուրդ):

Աճուրդի հրավերով սահմանված գնման առարկա է հանդիսանում ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունները:

Աճուրդի հայտերի ընդունման վերջնաժամկետ է սահմանվել 19.02.2019թ. ժամը 10:30-ը:

Հակադարձ աճուրդի ժամկետ է սահմանվել 21.02.2019թ. ժամը 10:30-ն:

Աճուրդին մասնակցության հայտ է ներկայացվել «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ի (հետայսու նաև՝ Մասնակից) և «Նատկ Սիստեմս» ՍՊԸ-ի կողմից:

Մասնակցի էլ փոստին, էլեկտրոնային աճուրդի համակարգից ներկայացվել է աճուրդի արդյունքների մասին ծանուցում, համաձայն որի Մասնակցի հայտը մերժված չէ և գնային առաջարկը չի գերազանցում նախահաշվային գինը:

Մասնակցի կողմից ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ.

- Պատվիրատուի կողմից 28.02.2019թ հրապարակվել է ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարություն, համաձայն որի Աճուրդը չկայացած է հայտարարվել, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ ոչ մի հայտ չի ներկայացվել,

- Աճուրդի հայտերի բացման նիստից հետո, Պատվիրատուի կողմից հրավերով սահանված ժամկետներում որևէ արձանագրություն հրապարակված չէ,

- Նույն գնման առարկայի ձեռքբերման նպատակով Պատվիրատուի կողմից կազմակերպվել է «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որը 11.04.2019թ դրությամբ դեռ անգործության ժամկետի մեջ է:

Մասնակիցը գտնում է, որ՝

- Աճուրդի շրջանակներում գնահատող հանձնաժողովի և/կամ քարտուղարի կողմից գործողությունները իրականացվել են գնումների մասին ՀՀ օրհենսդրությանը ոչ համապատասխան,

- գնահատող հանձնաժողովի կողմից Աճուրդը չկայացած հայտարարելու մասին ընդունված որոշումը ոչ իրավաչափ է,

-գնահատող հանձնաժողովի և/կամ քարտուղարի կողմից իրականացված ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում Մասնակիցը զրկվել է գնման գործընթացի հետագա մասնակցության իրավունքից:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները ներկայացված են ստորև՝

Համաձայն՝

Օրենքի 46-րդ հոդվածի՝

1. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

2. Գնումների, այդ թվում՝ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

3. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին.

2) դատական կարգով բողոքարկելու գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

4. Յուրաքանչյուր անձ, որը շահագրգռված է կոնկրետ գործարքի կնքման հարցում, և որը վնասներ է կրել պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կամ գնումների բողոքարկման խորհրդի կատարած գործողության կամ անգործության հետևանքով, իրավունք ունի դատական կարգով պահանջելու վնասների փոխհատուցում:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 33-րդ կետի 9-րդ

ենթակետի արգելվում է միևնույն բյուջետային տարվա ընթացքում նույն ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման նպատակով նախատեսել ֆինանսական միջոցներ:

Օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը:

ՀՀ կառավարության 2017թ մայիսի 18-ի «Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը եվ էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների եվ ծառայությունների ցուցակը հաստատելու մասին» թիվ 534-Ն որոշմամբ սահմանված էլէեկտրոնային աճուրդի իրականացման կարգի (հետայսու նաև՝ էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգ) 19-րդ կետի համաձայն աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝

1) գնահատող հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցով ներկայացված գնային առաջարկներն աճուրդն ամփոփվելու պահի դրությամբ գերազանցում են ընթացակարգի արդյունքում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման համար գնման հայտով սահմանված գինը.

2) գնահատող հանձնաժողովի քարտուղարն աճուրդի արդյունքների ամփոփման նպատակով հրավիրված նիստի արձանագրության, ինչպես նաև տվյալ նիստին ներկա հանձնաժողովի անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակում է տեղեկագրում.

3) գնահատող հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) է ներկայացնում հարցում առաջին տեղն .զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

4) գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը.

5) սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 14-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողը գնման ընթացակարգը հայտարարում է չկայացած:

Կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով:

Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է;

Մասնակիցը 16.04.2019թ. բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել Աճուրդի գնահատող հանձնաժողովին դադարեցնել Աճուրդը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել Աճուրդի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում Ընկերության հայտը բավարար գնահատելու և Ընկերությանը առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին:

«Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ն 17.04.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

Սոցիալական ապահովության ծառայության կարիքների համար կազմակերպվել է «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով գնման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկա է հանդիսանում ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունները:

Ընթացակարգի հրավերը հրապարակվել է 07.03.2019թ, իսկ հայտերի ընդունման վերջնաժամկետ է սահմանվել 15.03.2019թ ժամը՝ 10:30-ը:

Ընթացակարգով սահմանված նույն գնման առարկայի ձեռքբերման նպատակով Պատվիրատուի կողմից կազմակերպված «ՍԱԾ ԷԱՃԾՁԲ-19/3» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ էր ներկայացվել «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ի և «ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊԸ-ի կողմից:

Մասնակցի էլ. փոստին, էլեկտրոնային աճուրդի համակարգից ներկայացվել էր աճուրդի արդյունքների մասին ծանուցում, համաձայն որի Մասնակցի հայտը մերժված չէ և գնային առաջարկը չի գերազանցում նախահաշվային գինը:

Մասնակիցն երկար ժամանակ որևէ տեղեկատվություն չստանալով «ՍԱԾ ԷԱՃԾՁԲ-19/3» ծածկագրով գնման գործընթացի վերաբերյալ, իրականացրել է ուսումնասիրություններ, որի արդյունքում պարզվել է, որ տվյալ գնման գործընթացը ոչ մի հայտ չներկայացվելու հիմքով հայտարարվել է չկայացած, իսկ փոխարենը կազմակերպվել է «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով գնման ընթացակարգ:

«ՍԱԾ ԷԱՃԾՁԲ-19/3» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի և/կամ քարտուղարի կողմից իրականացված ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում Մասնակիցը զրկվել է տվյալ գնման գործընթացի հետագա մասնակցության իրավունքից:

Մասնակիցը հաշվի առնելով, որ գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն, նույն գնման առարկայի ձեռքբերման նպատակով, նույն բյուջետային տարում չեն կարող նախատեսվել ֆինանսական միջոցներ և կազմակերպվել ևս մեկ գնման ընթացակարգ, չի հետևել տեղեկագրում նոր գնման գործընթացի հրապարակմանը, ինչի արդյունքում բաց է թողել և չի մասնակցել «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով գնման ընթացակարգին:

Մասնակիցը վկայակոչել է Օրենքի 46-րդ հոդվածը, 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, Կարգի 33-րդ կետի 9-րդ ենթակետը:

Մասնակիցը գտնում է, որ սահմանափակվել է իր մասնակցության իրավունքը:

«Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ն բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում Ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ:

«Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 22.04.2019թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. Սոցիալական ապահովության ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Սոցիալական ապահովության ծառայությունը 22.04.2019թ. թիվ ՎԲ/ԿԲ-4/9093-19 գրությամբ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի և «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած թիվ համանման բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

2019 թվականի մարտի 7-ին Սոցիալական ապահովության ծառայության կողմից հայտարարվել է Սոցիալական ապահովության ծառայության կարիքների համար ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգ՝ «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով:

Գնման ընթացակարգի շրջանակում հայտեր են ներկայացրել թվով երեք ընկերություն՝ այդ թվում՝ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ և «ԷՄ ԸՆԴ ԴԸ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ կոնսորցիումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների

թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Պատվիրատուի գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, արձանագրել է, որ «Այթիռեսուրսիս» և «ԷՄ ԸՆԴ ԴԸ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի (հետայսու՝ Կոնսորցիում), «ՌԵՍԵԹ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված պայմաններին:

Հայտով ներկայացված ամբողջական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում՝ գնահատման հանձնաժողովի կողմից մերժվել է Կոնսորցիումի հայտը:

Հայտի մերժման հիմք հանդիսացած էական նշանակություն ունեցող փաստերը.

1. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ բաժնի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

2. Ընկերության կողմից հանձնաժողովին ներկայացրած փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ, որի արդյունքում Ընկերությանը հնարավորություն է տրվել մեկօրյա ժամկետում շտկել այն: Մասնավորապես՝ նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը ներկայացված է եղել միայն անգլերեն լեզվով:

3. Լրացուցիչ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում Ընկերության հայտը մերժվել է հետևյալ հիմնավորմամբ.

«Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը գնահատելու համար մասնակցի ներկայացրած նախկինում կատարված պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերի՝ պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածների պատճենները առկա չեն եղել, ինչը հնարավորություն չի տվել գնահատելու

պայմանագրով նախատեսված համակարգի ստեղծման աշխատանքների հանձնումը՝ պայմանագրի 9.3 և 9.4 կետերով սահմանված հավելվածներին համապատասխան:

Հայտի մերժման հիմքում ընկած իրավական հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Հրավերի 2-րդ մասի 1. 3 կետի համաձայն՝ հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

«ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի N 3 Արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերությունից պահանջվել է նախկինում կատարված պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերի՝ պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածների պատճենների հայերեն լեզվով թարգմությունը:

«Լեզվի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզուն գրական հայերենն է:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները և կազմակերպությունները պարտավոր են գործավարությունը կատարել գրական հայերենով՝ ապահովելով հայոց լեզվի անաղարտությունը, ամրագրված լեզվական կանոնները:

Ընկերության կողմից ներայացված փաստաթղթերի ամբողջական ուսումնասիրության արդյունքում՝ մերժվել է վերջինիս հայտը՝ հետևյալ հիմնավորումներով.

Որակավորումը գնահատելու համար հրավերի 2-րդ մասի 3.1 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Ընկերությունը պետք է ներկայացներ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ)՝ առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Ընկերության կողմից ներկայացված շտկված փաստաթղթերը գնահատելու համար հրավիրված հանձնաժողովի նիստում, հանձնաժողովը գնահատել է ներկայացված փատաթղթերը և արձանագրել է, որ նախկինում կատարված պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար մասնակցի կողմից ներկայացրած պայմանագրով հաստատված՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերի՝ պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածների պատճենները առկա չեն, պայմանագիրը ավարտված չէ, ինչը հնարավորություն չի տվել գնահատելու պայմանագրով նախատեսված համակարգի ստեղծման աշխատանքների հանձնումը պայմանագրի 9.3 և 9.4 կետերով սահմանված հավելվածներին համապատասխան, այսինքն չի բավարարել հրավերի 1-ին մասի 2.5 կետի 1-ին ենթակետի ա/ պարբերությամբ սահմանված պահանջներին:

Ըստ այդմ՝ «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով գնման ընթացակարգը Պատվիրատուի կողմից կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նպատակներին և սկզբունքներին համապատասխան:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգ 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում՝ հայտը գնահատվում է անբավարար, և մերժվում է:

«ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.21 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.20-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Ելնելով այն կարևոր հանգամանքից, որ Ընկերությունը շտկման հնարավորությունից օգտվելով՝ ներկայացրել է պայմանագրի թարգմանված հայերեն տարբերակը, սակայն չի ներկայացրել պայմանագրի՝ սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերի՝ պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածների պատճենները, Գնահատման հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

Ըստ այդմ՝ «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նպատակներին և սկզբունքներին համապատասխան, հանձնաժողովի կողմից կայացված որոշումն իրավաչափ է, հայտերը գնահատվել են հրավերով սահմանված կարգով ու «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջների, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի համաձայն:

Ելնելով վերոնշյալից Պատվիրատուն գտնում է, որ հանձնաժողովի կողմից կայացված որոշումն իրավաչափ է, բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:

«Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ի կողմից 2019թ. ապրիլի 17-ին ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/05 համանման բողոքի վերաբերյալ Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

Էլեկտրոնային աճուրդի eauction.armeps.am համակարգի միջոցով «ՍԱԾ ԷԱՃԾՁԲ-19/3» ծածկագրով Սոցիալական ապահովության ծառայությունը հայտարարել էր ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների գնման ընթացակարգ 2019թ. փետրվարի 11-ին: Հայտերի ներկայացման վերջնաժամկետ էր սահմանվել 2019թ. փետրվարի 19-ը:

Ընթացակարգը չկայացած հայտարարելու իրավական հիմնավորումները.

Հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումը կատարվում է ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգով (այսուհետ՝ Կարգ) և այլ իրավական ակտերով սահմանված և աճուրդի հրավերով սահմանված պահանջների համապատասխան:

«ՍԱԾ ԷԱՃԾՁԲ-19/3» ծածկագրով հրավերի 1-ին մասի 8.6 կետի համաձայն «Աճուրդի բոլոր չափաբաժինների արդյունքներն ամփոփվելուց անմիջապես հետո համակարգի հրապարակային էջի "Հայտեր բաժնում" ավտոմատ եղանակով հրապարակվում են ըստ յուրաքանչյուր չափաբաժնի համար սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների համար սահմանված գները, աճուրդի արդյունքում հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների անվանումներն ու վերջիններիս կողմից հայտով և աճուրդն ամփոփվելու պահի դրությամբ ներկայացված գները, դիմում-հայտարարությունները, ինչպես նաև այն մասնակիցների տվյալներն ու գնային առաջարկները, որոնք աճուրդի ամփոփման արդյունքում գերազանցել են սահմանված գները: Համակարգը սույն կետով նախատեսված տեղեկատվությունը միաժամանակ ավտոմատ եղանակով ուղարկում է գնահատող հանձնաժողովի անդամներին, քարտուղարին և հայտեր ներկայացրած մասնակիցներին:»:

«ՍԱԾ ԷԱՃԾՁԲ-19/3» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնով նախատեսված ժամկետում՝ համակարգում պետք է տեղի ունենար էլեկտրոնային աճուրդ՝ հայտ ներկայացրած մասնակիցների միջև Կարգի պահանջներին և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, ինչը տեղի չի ունեցել, որովհետև Էլեկտրոնային աճուրդի eauction.armeps.am համակարգը խափանվել է 19.02.2019թ.-ին, իսկ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին որոշելու համար աճուրդի համար ժամկետ էր սահմանված հայտերը ներկայացնելու ժամկետը լրանալու օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրը՝ 21.02.2019թ.-ին հրավերով սահմանված ժամին:

Աճուրդի eauction.armeps.am համակարգի խափանման պարագայում հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ տվյալների բացակայության և աճուրդի արդյունքով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից չլինելու պարագայում «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ն չէր կարող ճանաչվել 1-ին տեղ զբաղեցնող մասնակից՝ հետևաբար 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչվելու պնդումը անհիմն է:

Գնահատող հանձնաժողովի կողմից գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.02.2019թ. դրությամբ էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով կազմակերպված և չավարտված գնման ընթացակարգերը չեղյալ հայտարարելու և նոր գնման ընթացակարգեր իրականացնելու

վերաբերյալ 22.02.2019թ թիվ 01.1/26-1/2727-19 շրջաբերական գրությունը՝ աճուրդի eauction.armeps.am համակարգի խափանման և ստեղծված ֆորս մաժորային իրավիճակով պայմանավորված գնման նոր ընթացակարգեր անցկացնելու վերաբերյալ:

Միաժամանակ Պատվիրատուն հայտնել է, որ

1) «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ի ներկայացուցիչը 28.02.2019թ. արդեն իսկ տեղեկացված է եղել «ՍԱԾ ԷԱՃԾՁԲ-19/3» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ ընթացակարգը չկայացած հայտարարվելու մասին որոշման մասին (հրապարակված է gnumner.am պաշտոնական տեղեկագրում 28.02.2019թ.-ին), ինչպես նաև գնանշման հարցման ձևով տվյալ ծառայությունների գնման նոր ընթացակարգ կազմակերպվելու վերաբերյալ, այսինքն Ընկերության կողմից պնդումը, որ «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ երկար ժամանակ ուսումնասիրությունից հետո է տեղեկացել, որ հայտարարվել է նոր գնման ընթացկարգ անհիմն է:

2) ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն պայմանագրով պետք է նախատեսել, որ «պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել՝ նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը: Ընդ որում, արգելվում է միևնույն բյուջետային տարվա ընթացքում նույն ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման նպատակով նախատեսել ֆինանսական միջոցներ.»:

3) Հարկ է նշել որ գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած ոչ թե գնման պահանջը դադարելու հիմնավորմամբ, այլ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ

հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ ոչ մի հայտ չի ներկայացվել հիմնավորմամբ, հետևաբար Ընկերությունը ինքը չի հետևել նոր գնման գործընթացի հրապարակմանը ինչը նշված է Ընկերության 11.04.2019թ. բողոքում և դա Ընկերության բացթողման հետևանք է և ոչ թե հանձնաժողովի և/կամ/ քարտուղարի գործողության կամ անգործության հետևանք:

Այսինքն՝ գնահատող հանձնաժողովի կողմից կայացրած որոշումն իրավաչափ է, համապատասխանում է գնումների մասին ՀՀ օրենսդրությանը, բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 22.04.2019թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2019/05 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2019/05 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Սոցիալական ապահովության ծառայության կողմից Սոցիալական ապահովության ծառայության կարիքների համար ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով 11.02.2019թ. հայտարարվել է «ՍԱԾ ԷԱՃԾՁԲ-19/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որի հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է եղել 19.02.2019թ. ժամը 10:30-ը:

2. 28.02.2019թ. www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՍԱԾ ԷԱՃԾՁԲ-19/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա չկայացած հայտարարելու մասին գնահատող հանձնաժողովի որոշումը:

3. Սոցիալական ապահովության ծառայության կողմից Սոցիալական ապահովության ծառայության կարիքների համար ծրագրային ապահովման սպասարկման

ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Այթիռեսուրսիս» և «Էմ ընդ Դը Սիսթեմս» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հանձնաժողովի 15.03.2019թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Այթիռեսուրսիս» և «Էմ ընդ Դը Սիսթեմս» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.03.2019թ. ժամը 09:45-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Կոնսորցիումի կողմից ներկայացրած փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես. նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրության և այլն) պատճենը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 1.3 կետով սահմանված պայմաններին: Հետևապես պայմանագրի (պայմանագրերի) և այդ պայմանագրերի պատշաճ կատարումը գնահատելու համար (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հայերեն լեզվով տարբերակները:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.03.2019թ. ժամը 12:30-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Այթիռեսուրսիս» և «Էմ ընդ Դը Սիսթեմս» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը գնահատելու համար Կոնսորցիումի ներկայացրած նախկինում կատարված պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերի՝ պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածների պատճեններն առկա չեն, ինչը հնարավորություն չի տալիս

գնահատելու պայմանագրով նախատեսված համակարգի ստեղծման աշխատանքների հանձնումը՝ պայմանագրի 9.3 և 9.4 կետերով սահմանված հավելվածներին համապատասխան:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Այթիոեսուրսիս» ՍՊԸ-ի կողմից 17.04.2019թ. ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով, «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ի կողմից 16.04.2019թ. և 17.04.2019թ. ներկայացված բողոքները՝ կից փաստաթղթերով, Սոցիալական ապահովության ծառայության 22.04.2019թ. թիվ ՎԲ/ԿԲ-4/9093-19 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման

բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է

նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Սոցիալական ապահովության ծառայության կողմից Սոցիալական ապահովության ծառայության կարիքների համար ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով 11.02.2019թ. հայտարարվել է «ՍԱԾ ԷԱՃԾՁԲ-19/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որի հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է եղել ***19.02.2019թ. ժամը 10:30-ը***:

28.02.2019թ. www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՍԱԾ ԷԱՃԾՁԲ-19/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա չկայացած հայտարարելու մասին գնահատող հանձնաժողովի որոշումը:

Գնահատող հանձնաժողովն Աճուրդը չկայացած հայտարարելու մասին որոշման մեջ որպես հիմք մատնանշել է Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, որի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե ոչ մի հայտ չի ներկայացվել, մինչդեռ E-auction համակարգում առկա տեղեկատվության համաձայն՝ Աճուրդին մասնակցության հայտ են ներկայացրել «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ն և «ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊԸ-ն:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատվիրատուներին ուղղված շրջաբերականով հայտնել է, որ ***11.02.2019թ. ժամը 09:00-ից մինչև 19.02.2019թ. ժամը 18:00-ն*** ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային աճուրդի ծրագրային ապահովման մեջ ի հայտ են եկել խնդիրներ, որոնց հետևանքով մի շարք կազմակերպություններ չեն կարողացել մասնակցության հայտ ներկայացնել գնման ընթացակարգերին, մասնակցել հակադարձ աճուրդներին, ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր և այլն:

Նույն գրության 1-ին կետի համաձայն՝ ***19.02.2019թ. դրությամբ էլեկտրոնային աճուրդների միջոցով կազմակերպված և չավարտված գնման ընթացակարգերը, որոնց հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված եղել վերոհիշյալ ժամանակահատվածը և որոնց շրջանակներում պետք է կայանային հակադարձ աճուրդները անհրաժեշտ է հայտարարել չեղյալ:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ գնումները և գնումների գործընթացը պետք է լինի տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է ընթացակարգերի 4 տեսակները, որոնց շարքում առանձնացվում է նաև էլեկտրոնային աճուրդը:

Հաշվի առնելով էլեկտրոնային աճուրդի իրականացման առանձնահատկությունները՝ ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատվել է «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգը, որով հստակ սահմանվել է էլեկտրոնային աճուրդի իրականացման ընթացքը փուլ առ փուլ:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 4-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդը էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ նոր՝ նվազեցված գները ներկայացնելու գործընթաց է, որը հնարավորություն է տալիս ավտոմատ գնահատման մեթոդներով (միջոցներով) որոշելու հայտեր ներկայացրած մասնակիցների զբաղեցրած տեղերը՝ հաջորդականությունը:

Նույն կարգի 12-րդ կետը սահմանում է, որ հայտերն ներկայացնելու ժամկետը լրանալու պահի դրությամբ համակարգն ավտոմատ ծանուցման միջոցով հայտ ներկայացրած բոլոր մասնակիցներին ուղարկում է ներկայացված նվազագույն գնային առաջարկը, ինչպես նաև նոր (վերանայված) գներ ներկայացնելու վերաբերյալ առաջարկություն:

Նույն կարգի 15-րդ կետի համաձայն՝ մինչև աճուրդի ամփոփման համար հրավերով սահմանված ժամկետը լրանալը՝ համակարգն ավտոմատ եղանակով մասնակիցներին ներկայացնում է յուրաքանչյուր մասնակցի քայլը և այն կատարելու օրը, ժամը:

Ընդ որում քայլը՝ մինչև էլեկտրոնային աճուրդի ամփոփումը՝ մասնակցի կողմից վերանայված և ներկայացված նոր՝ ***նվազեցված գնային առաջարկն է:***

Տվյալ դեպքում, գտնում եմ, որ Eauction համակարգում առկա տեխնիկական խնդիրների պատճառով խախտվել է «ՍԱԾ ԷԱՃԾՁԲ-19/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը, որի հետևանքով աճուրդը որպես այդպիսին տեղի չի ունեցել և գները չեն նվազեցվել, որի պայմաններում խախտվել է նաև գնումների գործընթացի սկզբունքները:

Այսպիսով՝ Աճուրդի հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է եղել 19.02.2019թ. ժամը 10:30-ը, որը համընկնում է ՀՀ ֆինանսների նախարարության վերոհիշյալ շրջաբերականում մատնանշված ժամանակահատվածի հետ, ուստի «ՍԱԾ ԷԱՃԾՁԲ-19/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդը, համաձայն նույն շրջաբերականի պետք է համարվեր չկայացած և վերոգրյալով պայմանավորված, գտնում եմ, որ «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ի կողմից 16.04.2019թ. և 17.04.2019թ. ներկայացված բողոքներն անհիմն են և ենթակա են մերժման:

Անդրադառնալով «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի կողմից 17.04.2019թ. ներկայացված բողոքին՝ գտնում եմ, որ այն հիմնավոր է և ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սոցիալական ապահովության ծառայության կողմից Սոցիալական ապահովության ծառայության կարիքների համար ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Այթիռեսուրսիս» և «Էմ ընդ Դը Սիսթեմս» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հանձնաժողովի 15.03.2019թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Այթիռեսուրսիս» և «Էմ ընդ Դը Սիսթեմս» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.03.2019թ. ժամը 09:45-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Կոնսորցիումի կողմից ներկայացրած

փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես. նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրության և այլն) պատճենը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 1.3 կետով սահմանված պայմաններին: Հետևապես պայմանագրի (պայմանագրերի) և պայմանագրերի պատշաճ կատարումը գնահատելու համար (հանձնման-ընդունման արձանագրության և այլն) պատճենն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ***հայերեն լեզվով տարբերակները:***

Կոնսորցիումին ծանուցվել է անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.03.2019թ. ժամը 12.30-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Այթիռեսուրսիս» և «Էմ ընդ Դը Սիսթեմս» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը գնահատելու համար Կոնսորցիումի ներկայացրած նախկինում կատարված պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերի՝ պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածների պատճեններն առկա չեն, ինչը հնարավորություն չի տալիս գնահատելու պայմանագրով նախատեսված համակարգի ստեղծման աշխատանքների հանձնումը՝ պայմանագրի 9.3 և 9.4 կետերով սահմանված հավելվածներին համապատասխան:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:***

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 1-ին կետի 1.3 ենթակետով սահմանվել է, որ ***հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:***

Այսպիսով՝ Կոնսորցիումի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու նպատակով ներկայացված 24.08.2017թ. թիվ 0240817 անգլերեն պայմանագիրը՝ կից փաստաթղթերով (հետայսու նաև՝ պայմանագիր), գնահատող հանձնաժողովի կողմից դիտարկվել է որպես հրավերի պահանջներին

չհամապատասխանող, քանի որ այն, ըստ գնահատող հանձնաժողովի, պետք է ներկայացվեր հայերեն: Միևնույն ժամանակ Կոնսորցիումի կողմից Կարգի 48-րդ կետի համաձայն շտկվել է արձանագրված անհամապատասխանությունը, այն է՝ գնահատող հանձնաժողովին ներկայացվել է պայմանագրի հայերեն թարգմանված տարբերակը, որից հետո սակայն գնահատող հանձնաժողովի կողմից կրկին արձանագրվել են անհամապատասխանություններ ներկայացված պայմանագրում:

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» 14-րդ հոդվածի 2-րդ մասը, Հրավերի ՄԱՍ II-ի 1-ին կետի 1.3 ենթակետը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի նպատակը և գնման գործընթացի սկզբունքների պահպանումն ապահովելու համար, գտնում եմ, որ «Այթիոեսուրսիս» ՍՊԸ-ի կողմից անգլերեն պայմանագիր ներկայացնելը չի հակասել հրավերի պահանջներին, քանի որ վերջինս սահմանում է, որ հայտերը հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն: Հետևաբար, նման պայմաններում, գտնում եմ, որ Ընկերությունը չպետք է զրկվի Կարգի 47-րդ կետի հիման վրա, պայմանագրի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը շտկելու հնարավորությունից:

Ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի կողմից 17.04.2019թ. ներկայացված բողոքը բավարարել.

1. Պարտավորեցնել «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

- Դադարեցնել «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը.
- Դադարեցնել «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումից հետո գնահատող հանձնաժողովի կողմից կայացված բոլոր մյուս որոշումները.
- Պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել համապատասխան որոշում «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը գնահատելու վերաբերյալ:

2. «Գլոբալ Սոլուշն» ՍՊԸ-ի կողմից 16.04.2019թ. և 17.04.2019թ. ներկայացված բողոքները մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ